

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 16-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Երևանում Կառավարական Տան մեջ, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Ե. Քոչինյանին:

Ընդունելության ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը:

Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Ե. Քոչինյանի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց Մայր Աթոռի Եկեղեցական և շինարարական աշխատանքների վերաբերյալ: